ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
**ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

Ե/2246-25 **0077, ք. Երևան, Մ. Մաշտոցի պողոտա 47**
11 Նոյեմբերի, 2025թ.

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Արշակյան,**

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, գնումների ոլորտում մրցակցության ապահովման և խտրականության բացառման նպատակով իրականացնում է մշտադիտարկում, որի շրջանակներում Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար աղբատար մեքենայի սարքերի ձեռքբերման նպատակով 2025 թվականի նոյեմբերի 4-ին տեղեկագրում *(օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք)* հրապարակված «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/130» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) վերլուծությամբ արձանագրվել են գնումների մասին օրենսդրության պահանջների անհամապատասխանություններ:

Մասնավորապես, Հրավերի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնման առարկայի տեխնիկական բնութագրում գնման առարկայի հատկանիշների բնութագրում առկա որոշ չափորոշիչների համար սահմանված չեն առավելագույն կամ նվազագույն չափանիշներ, ինչով պայմանավորված առկա են **մրցակցության հավասար պայմանների ապահովման մասով սահմանափակումներ:**

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով՝ առաջարկում ենք քննարկել և հրավերում, Օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, կատարել

փոփոխություններ՝ ձեռնարկված քայլերի մասին տեղեկություն ներկայացնելով Ծառայությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

*Կատարող՝ Անի Ախոյան*
*Ստորաբաժանում՝ Գնումների գործընթացների վերահսկողության վարչություն*
*Հեռ.՝ 010 31 32 14*